ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ՝ 21.03.2007 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-54 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի, աշխատակարգային նիստում քննեց՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումը քննության ընդունելու մասին հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը, ուսումնասիրելով սույն դիմումը, այն քննության ընդունելու վերաբերյալ միաձայնությամբ որոշում չի կայացրել եւ այդ մասին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան տեղյակ է պահել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահին՝ 2007 թվականի ապրիլի 3-ին:

Դիմելով սահմանադրական դատարան՝ քաղաքացի Ռուբեն Թորոսյանը խնդրում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող: Օրենսգրքի այդ գլուխը կրում է «Ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության եւ տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթը» վերտառությունը եւ ներառում է 153, 154 եւ 155 հոդվածները: Սահմանադրական դատարան ներկայացնելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.02.2007 թվականի, 16.02.2007 թվականի եւ 22.02.2007 թվականի վճիռները՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի՝ օրենքին հակասող գործողությունը (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ իր դիմումները մերժելու մասին, քաղաքացի Ռուբեն Թորոսյանը պնդում է, որ այդ վճիռներով դատարանը պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի նորմերը, եւ արդյունքում կայացրած վճիռն օրինական ուժի մեջ պետք է մտներ հրապարակման պահից եւ բողոքարկման ենթակա չլիներ՝ ինչպես նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածում:

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ վճիռներից հետեւում է, որ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը չեն կիրառվել, իսկ կայացված վճիռները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով դիմողի կողմից՝ վերաքննիչ դատարան եւ ՀՀ վճռաբեկ դատարան չեն բողոքարկվել, ինչը վկայող որեւէ փաստաթուղթ դիմողը սահմանադրական դատարան չի ներկայացրել:

Բացի դրանից, քաղաքացի Ռուբեն Թորոսյանը փորձում է սահմանադրական դատարանում նաեւ վիճարկել ընդհանուր իրավասության դատարանի կողմից օրենքի կիրառման խնդիր, որի լուծումը ՀՀ սահմանադրական դատարանի **իրավասությունը չէ:**

ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով ՀՀ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի **վերջնական ակտը**, սպառվել են դատական պաշտպանության **բոլոր միջոցները** եւ վիճարկվում է այդ ակտով **իր նկատմամբ** կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Ելնելով վերոշարադրյալից եւ այն հանգամանքից, որ դիմումն ակնհայտ անհիմն է,

ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասով,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Մերժել քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի քննության ընդունումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՆԴԱՄ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

11 ապրիլի 2007 թվականի
ՍԴԱՈ-57